«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
10 դեկտեմբերի 2012 թ.

Պետական գրանցման թիվ 11812437

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

21 նոյեմբերի 2012 թ. թիվ 1016-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

«ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝

Հրամայում եմ.

1. Հաստատել «Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը և դրա կիրառման հրահանգը»՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Վ. Գաբրիելյան

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2012 թվականի նոյեմբերի 21-ի
թիվ 1016-Ն հրամանի

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը (այսուհետ՝ հաշվային պլան) մշակվել է փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին) համապատասխան հաշվապահական հաշվառում վարելուն և ֆինանսական հաշվետվություններ պատրաստելուն օժանդակելու նպատակով: Սույն հաշվային պլանի մշակումն իրականացվել է՝ առավելագույնս պահպանելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի ապրիլի 17-ի թիվ 353-Ն հրամանով հաստատված հաշվային պլանի կառուցվածքի հետ համադրելիությունն ու սկզբունքները:

Սույն հաշվային պլանը նախատեսված է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին համապատասխան առանձին կամ անհատական (ոչ համախմբված) ֆինանսական հաշվետվություններ պատրաստող կազմակերպությունների համար և կրում է օրինակելի, օժանդակող, ցուցադրող բնույթ: Թեև հաշվային պլանը պարտադիր բնույթ չի կրում, դրան հետևելը դյուրացնում է հաշվապահների, աուդիտորների, հաշվապահական համակարգչային ծրագրեր մշակողների, պետական լիազոր մարմինների գործը և նպաստում է ֆինանսական հաշվետվությունների համադրելիությանը:

Հաշվային պլանը բաղկացած է երեք բաժնից՝

I. Ընդհանուր դրույթներ,

II. Հաշվապահական հաշվառման հաշիվների ցանկ,

III. Հաշվապահական հաշվառման հաշիվների կիրառման հրահանգ:

I բաժնում տրված է հաշվային պլանի ընդհանուր բնութագիրը, գործողության ոլորտը, ֆինանսական հաշվետվությունների ձևերի հետ կապը, ինչպես նաև դասակարգման և կոդավորման հիմունքները:

II բաժնում տրված է հաշվապահական հաշվառման դասերում և խմբերում միավորված առաջին և երկրորդ կարգի հաշիվների ցանկը:

III բաժնում տրված է հաշվապահական հաշվառման հաշիվների կիրառման հրահանգը:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հաշվապահական հաշվառման հաշվային պլանը կազմակերպության վրա ազդող իրադարձությունների և դրա կողմից իրականացվող գործառնությունների փաստերի՝ հաշվապահական հաշվառման մեջ գրանցման և խմբավորման սխեմա է:

Հաշվային պլանը կազմված է ըստ տնտեսական բովանդակության դասակարգված հաշիվներից և ներառում է հաշիվների դասեր, հաշիվների խմբեր, առաջին կարգի հաշիվներ (սինթետիկ հաշիվներ) և երկրորդ կարգի հաշիվներ (ենթահաշիվներ):

Հաշվային պլանը ներառում է 9 դաս՝

1. Ոչ ընթացիկ ակտիվներ,

2. Ընթացիկ ակտիվներ,

3. Սեփական կապիտալ,

4. Ոչ ընթացիկ պարտավորություններ,

5. Ընթացիկ պարտավորություններ,

6. Եկամուտներ,

7. Ծախսեր,

8. Կառավարչական հաշվառման հաշիվներ,

9. Արտահաշվեկշռային հաշիվներ:

1-7 դասերն ընդգրկում են ֆինանսական հաշվառման հաշիվները, 8-րդ դասը՝ կառավարչական հաշվառման և 9-րդ դասը՝ արտահաշվեկշռային հաշիվները:

Ֆինանսական հաշվառման հաշիվներն օգտագործվում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլման ենթակա տեղեկատվության ընդհանրացման համար: Դրանք բաժանվում են հաշվեկշռային հաշիվների (1-5 դասեր) և գործունեության արդյունքների հաշիվների (6-7 դասեր):

Հաշվեկշռային հաշիվները նախատեսված են կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի և պարտավորությունների հաշվառման համար: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են այս հաշիվների (դեբետային կամ կրեդիտային) մնացորդները:

Գործունեության արդյունքների հաշիվները նախատեսված են կազմակերպության եկամուտների և ծախսերի հաշվառման համար: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում այս հաշիվների զուտ շրջանառությունը (դեբետային՝ ծախսերի գծով և կրեդիտային՝ եկամուտների գծով), իսկ սահմանված դեպքերում՝ դրանց տարբերությունը տեղափոխվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն:

Կառավարչական հաշվառման հաշիվները (8-րդ դաս) նախատեսված են արտադրական ծախսումների և արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքի, ինչպես նաև ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) և մշակման ծախսումների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար, որոնք օգտագործվում են կազմակերպությունում կառավարչական որոշումներ ընդունելու նպատակով:

Արտահաշվեկշռային հաշիվները (9-րդ դաս) նախատեսված են կազմակերպությանը չպատկանող, բայց ժամանակավորապես նրա տրամադրության կամ օգտագործման տակ գտնվող ակտիվների (գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցներ, պատասխանատու պահպանման, վերամշակման ընդունված ապրանքանյութական արժեքներ, հավատարմագրային պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ, կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ և այլն), պայմանական ակտիվների և պարտավորությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման, ինչպես նաև առանձին գործառնությունների վերահսկման համար:

Հաշիվների կոդավորումը կառուցված է հետևյալ կերպ՝

- հաշիվների դասերը նշված են միանիշ թվով՝ 1-ից մինչև 9-ը,
- հաշիվների խմբերը նշված են երկնիշ թվով, որոնցից առաջինը ցույց է տալիս դասի ծածկագիրը, իսկ երկրորդը՝ խմբի համարը,
- առաջին կարգի հաշիվները նշված են եռանիշ թվով, որոնցից առաջին երկուսը ցույց են տալիս խմբի ծածկագիրը, երրորդը՝ առաջին կարգի հաշվի համարը,
- երկրորդ կարգի հաշիվները նշված են քառանիշ թվով, որոնցից առաջին երեքը ցույց են տալիս առաջին կարգի հաշվի ծածկագիրը, չորրորդը՝ երկրորդ կարգի հաշվի համարը:

Հաշիվները, կախված կազմակերպությունում գործունեության տարբեր տեսակների (վարձակալական գործունեություն, արժեթղթերի առքուվաճառք) հարաբերական կարևորությունից և կրկնման հաճախականությունից, կարող են փոփոխվել, եթե այդ փոփոխությունը կնպաստի կազմակերպության

հիմնական գործունեության, այլ գործառնական գործունեության և ոչ գործառնական գործունեության արդյունքների առավել ճշմարիտ ներկայացմանը: Երկրորդ կարգի բոլոր հաշիվները, ինչպես նաև 8-9-րդ դասի առաջին կարգի հաշիվներն օգտագործվում են անհրաժեշտության դեպքում՝ ելնելով կազմակերպության գործունեության առանձնահատկություններից, ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության բացահայտման պահանջներից, ինչպես նաև վերահսկողության և վերլուծության նպատակներից:

Յուրահատուկ գործառնությունների հաշվառման նպատակով կազմակերպությունները, անհրաժեշտության դեպքում, կարող են՝

- հաշվային պլանում ավելացնել լրացուցիչ առաջին և երկրորդ կարգի հաշիվներ՝ օգտագործելով հաշիվների ազատ ծածկագրերը, կամ՝
- փոփոխել առաջին և երկրորդ կարգի հաշիվները՝ այդ փոփոխությունները ներկայացնելով հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ:

Հաշվային պլանը ներառում է ակտիվային, պասիվային, ակտիվապասիվային հաշիվներ: 1-ին, 2-րդ, 7-րդ, 8-րդ դասերի հաշիվները, բացառությամբ պասիվային կարգավորող հաշիվների, ակտիվային են, իսկ 3-6-րդ դասերի հաշիվները, բացառությամբ կարգավորող և ակտիվապասիվային հաշիվների, պասիվային են:

1-8-րդ դասերի հաշիվներում և 9-րդ դասի 92 խմբում (այն նախատեսված է բրոքերային և հավատարմագրային գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար) կազմակերպության գործառնությունների և դրա վրա ազդող իրադարձությունների արտացոլումն իրականացվում է կրկնակի գրանցման հիմունքով, իսկ 9-րդ դասի մնացած հաշիվներում՝ հաշվառման պարզ (միակի գրանցման) համակարգով:

II. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՑԱՆԿ

ԴԱՍ 1. ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ

11-12 ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

111 Մաշվող հիմնական միջոցներ

1111 Շենքեր
1112 Կառուցվածքներ
1113 Փոխանցող հարմարանքներ
1114 Մեքենաներ և սարքավորումներ
1115 Տրանսպորտային միջոցներ
1116 Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ
1119 Այլ հիմնական միջոցներ

112 Հիմնական միջոցների մաշվածություն

1121 Շենքերի մաշվածություն
1122 Կառուցվածքների մաշվածություն
1123 Փոխանցող հարմարանքների մաշվածություն
1124 Մեքենաների և սարքավորումների մաշվածություն
1125 Տրանսպորտային միջոցների մաշվածություն
1126 Արտադրական գույքի, տնտեսական գույքի, գործիքների մաշվածություն
1129 Այլ հիմնական միջոցների մաշվածություն

115 Հողամասեր

116 Կենսաբանական ակտիվներ

1161 Պտղատու այգիներ
1162 Ծառեր տնկադաշտում
1163 Թփեր
1164 Խաղողի վազեր
1165 Կաթնատու հոտ
1166 Մսատու կենդանիներ

117 Կենսաբանական ակտիվների մաշվածություն

1171 Պտղատու այգիների մաշվածություն
1172 Ծառեր տնկադաշտում – մաշվածություն
1173 Թփերի մաշվածություն
1174 Խաղողի վազերի մաշվածություն
1175 Կաթնատու հոտի մաշվածություն
1176 Մսատու կենդանիների մաշվածություն

118 Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ

1181 Օգտագործման համար ոչ մատչելի շենքեր
1182 Օգտագործման համար ոչ մատչելի կառուցվածքներ
1183 Օգտագործման համար ոչ մատչելի փոխանցող հարմարանքներ
1184 Օգտագործման համար ոչ մատչելի մեքենաներ և սարքավորումներ

1185 Օգտագործման համար ոչ մատչելի տրանսպորտային միջոցներ
1186 Օգտագործման համար ոչ մատչելի արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ
1189 Օգտագործման համար ոչ մատչելի այլ հիմնական միջոցներ

119 Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ

121 Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն

122 Ներդրումային գույք

1221 Իրական արժեքով հաշվառվող ներդրումային գույք
1222 Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույք

123 Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի մաշվածություն

124 Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում

1241 Մաշվող հիմնական միջոցների արժեզրկում
1242 Հողամասերի արժեզրկում
1243 Կենսաբանական ակտիվների արժեզրկում
1244 Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում
1245 Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների արժեզրկում
1246 Ներդրումային գույքի արժեզրկում

13 ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

131 Ոչ նյութական ակտիվներ

1311 Ֆիրմային անուններ
1312 Հրապարակումների անուններ
1313 Համակարգչային ծրագրեր
1314 Լիցենզիաներ և վստահագրեր (ֆրանշիզներ)
1315 Հեղինակային իրավունքներ
1316 Արտոնագրեր
1317 Ծառայությունների մատուցման և շահագործման իրավունքներ
1318 Բանաձևեր, մոդելներ, նախագծեր, բաղադրատոմսեր և փորձանմուշներ
1319 Այլ ոչ նյութական ակտիվներ

132 Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա

1321 Ֆիրմային անունների ամորտիզացիա
1322 Հրապարակումների անունների ամորտիզացիա
1323 Համակարգչային ծրագրերի ամորտիզացիա
1324 Լիցենզիաների և վստահագրերի (ֆրանշիզների) ամորտիզացիա
1325 Հեղինակային իրավունքների ամորտիզացիա
1326 Արտոնագրերի ամորտիզացիա
1327 Ծառայությունների մատուցման և շահագործման իրավունքների ամորտիզացիա
1328 Բանաձևերի, մոդելների, նախագծերի, բաղադրատոմսերի և փորձանմուշների ամորտիզացիա
1329 Այլ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա

134 Գուդվիլ

135 Գուդվիլի ամորտիզացիա

136 Ոչ նյութական ակտիվների արժեզրկում

1361 Ոչ նյութական ակտիվների արժեզրկում

1363 Գուդվիլի արժեզրկում

14 ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

141 Ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում

1411 Ինքնարժեքի հիմունքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում

1412 Իրական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում

142 Ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում

1421 Ինքնարժեքի հիմունքով հաշվառվող ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում

1422 Իրական արժեքով հաշվառվող ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում

1423 Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում

143 Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր

144 Այլ պարտքային գործիքներում երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր

145 Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ

1451 Իրական արժեքով չափվող այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ

1452 Ինքնարժեքի հիմունքով չափվող այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ

1453 Վարկ ստանալու ոչ ընթացիկ պարտավորվածություններ (զուտ հիմունքով չմարվող)

146 Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքեր

147 Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով

1471 Չվաստակած ֆինանսական եկամուտ երկարաժամկետ փոխառությունների գծով

1472 Չվաստակած ֆինանսական եկամուտ այլ պարտքային գործիքներում երկարաժամկետ ներդրումների գծով

1473 Չվաստակած ֆինանսական եկամուտ ֆինանսական վարձակալության գծով

148 Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ

149 Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկում (անհավաքագրելիություն)

1491 Չկապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ոչ ընթացիկ ներդրումների արժեզրկում

1492 Կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ներդրումների արժեզրկում

1493 Երկարաժամկետ փոխառությունների անհավաքագրելիություն

1494 Այլ պարտքային գործիքներում ներդրումների արժեզրկում

1495 Վարկ ստանալու պարտավորվածությունների (զուտ հիմունքով չմարվող) արժեզրկում

1496 Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքերի անհավաքագրելիություն

15 ԱՅԼ ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ

151 Հետաձգված հարկային ակտիվներ

152 Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար

153 Սահմանված հատուցումների պլանների ակտիվներ

154 Ոչ ընթացիկ ակտիվներ հետաձգված ծախսերի գծով

155 Հետաձգված ծախսերի գծով ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացիա

156 Ձեռնարկատիրական գործունեության ձեռքբերում

ԴԱՍ 2. ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ

21 ՊԱՇԱՐՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

211 Նյութեր

2111 Հումք և նյութեր
2112 Գնովի կիսապատրաստուկներ, համալրող շինվածքներ և դետալներ
2113 Վառելիք
2114 Տարա և տարանյութեր
2115 Պահեստամասեր
2116 Շինանյութեր
2117 Գյուղատնտեսական նշանակության նյութեր
2118 Վերամշակման հանձնված նյութեր
2119 Այլ նյութեր

212 Սպառվող կենսաբանական ակտիվներ

214 Անավարտ արտադրություն

2141 Արտադրանքի գծով անավարտ արտադրություն
2142 Աշխատանքների գծով անավարտ արտադրություն
2143 Ծառայությունների գծով անավարտ արտադրություն
2144 Օժանդակ արտադրության գծով անավարտ արտադրություն

215 Արտադրանք

2151 Պատրաստի արտադրանք
2152 Սեփական արտադրության կիսապատրաստուկներ
2153 Կոնսիգնացիոն և կոմիսիոն հիմունքներով վաճառքի հանձնված արտադրանք
2154 Առաքված արտադրանք

216 Ապրանքներ

2161 Ապրանքներ պահեստում
2162 Ապրանքներ մանրածախ առևտրում
2163 Տարա և տարանյութեր
2164 Կոնսիգնացիոն և կոմիսիոն հիմունքներով վաճառքի հանձնված ապրանքներ

2165 Առաքված ապրանքներ
2166 Այլ ապրանքներ

217 Ապրանքների վաճառքի գնի և ինքնարժեքի տարբերություն

2171 Առևտրական հավելագին
2172 Ավելացված արժեքի հարկ
2173 Ակցիզային հարկ

218 Պաշարների արժեքի նվազում

2181 Նյութերի արժեքի նվազում
2184 Անավարտ արտադրանքի արժեքի նվազում
2185 Արտադրանքի արժեքի նվազում
2186 Ապրանքների արժեքի նվազում

22 ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

221 Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով

2211 Դեբիտորական պարտքեր արտադրանքի, ապրանքների վաճառքների գծով
2212 Դեբիտորական պարտքեր մատուցած ծառայությունների, կատարած աշխատանքների գծով
2213 Դեբիտորական պարտքեր այլ պաշարների վաճառքների գծով
2214 Դեբիտորական պարտքեր ֆինանսական ներդրումների վաճառքների գծով
2215 Դեբիտորական պարտքեր հիմնական միջոցների վաճառքների գծով
2216 Դեբիտորական պարտքեր այլ վաճառքների գծով

222 Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով

2221 Դեբիտորական պարտքեր գործառնական վարձակալության գծով
2222 Դեբիտորական պարտքեր ստացվելիք շահաբաժինների գծով
2223 Դեբիտորական պարտքեր ստացվելիք տոկոսների գծով
2224 Դեբիտորական պարտքեր ապահովագրական հատուցումների գծով
2225 Դեբիտորական պարտքեր տույժերի, տուգանքների գծով
2226 Դեբիտորական պարտքեր նյութական վնասի փոխհատուցման գծով
2227 Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով

223 Դեբիտորական պարտքերի կորստի պահուստ

224 Տրված ընթացիկ կանխավճարներ

2241 Տրված կանխավճարներ նյութեր ձեռք բերելու համար
2242 Տրված կանխավճարներ ապրանքներ ձեռք բերելու համար
2243 Տրված կանխավճարներ աշխատանքներ, ծառայություններ ձեռք բերելու համար
2244 Այլ նպատակներով տրված ընթացիկ կանխավճարներ

225 Դեբիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով

2251 Դեբիտորական պարտքեր շահութահարկի գծով
2252 Դեբիտորական պարտքեր եկամտահարկի գծով
2253 Դեբիտորական պարտքեր ավելացված արժեքի հարկի գծով
2254 Դեբիտորական պարտքեր ակցիզային հարկի գծով
2255 Դեբիտորական պարտքեր գույքահարկի գծով
2256 Դեբիտորական պարտքեր հողի հարկի գծով

2257 Դեբիտորական պարտքեր մաքսատուրքի գծով
2258 Դեբիտորական պարտքեր պետական տուրքի գծով
2259 Դեբիտորական պարտքեր այլ պարտադիր վճարների գծով

226 Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր

227 Դեբիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով

228 Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով

2281 Առհաշիվ տրված գումարներ նյութեր ձեռք բերելու համար
2282 Առհաշիվ տրված գումարներ ապրանքներ ձեռք բերելու համար
2283 Առհաշիվ տրված գումարներ գործուղումների համար
2284 Այլ նպատակներով առհաշիվ տրված գումարներ

229 Այլ դեբիտորական պարտքեր

2291 Դեբիտորական պարտքեր աշխատավարձի վճարման գծով
2292 Դեբիտորական պարտքեր աշխատակիցների հետ այլ գործառնությունների գծով
2293 Դեբիտորական պարտքեր բողոքարկումների գծով
2294 Դեբիտորական պարտքեր բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով հայտարարված շահաբաժինների գծով

23-24 ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

231 Ընթացիկ ներդրումներ բաժնային գործիքներում

2311 Ինքնարժեքի հիմունքով չափվող ընթացիկ ներդրումներ բաժնային գործիքներում
2312 Իրական արժեքով չափվող ընթացիկ ներդրումներ բաժնային գործիքներում

232 Կարճաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր

233 Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս

234 Այլ պարտքային գործիքներում կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր

235 Այլ պարտքային գործիքներում երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս

236 Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ

2361 Իրական արժեքով չափվող այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ
2362 Ինքնարժեք հիմունքով չափվող այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ
2363 Վարկ ստանալու ընթացիկ պարտավորվածություններ (զուտ հիմունքով չմարվող)

237 Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս

238 Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական ակտիվների գծով

2381 Չվաստակած ֆինանսական եկամուտ կարճաժամկետ փոխառությունների գծով
2382 Չվաստակած ֆինանսական եկամուտ երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մասի գծով

2383 Չվաստակած ֆինանսական եկամուտ այլ պարտքային գործիքներում կարճաժամկետ ներդրումների գծով

2384 Չվաստակած ֆինանսական եկամուտ այլ պարտքային գործիքներում երկարաժամկետ ներդրումների կարճաժամկետ մասի գծով

2385 Չվաստակած ֆինանսական եկամուտ ֆինանսական վարձակալության կարճաժամկետ մասի գծով

239 Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ

241 Ընթացիկ ֆինանսական ներդրումների արժեզրկում (անհավաքագրելիություն)

2411 Բաժնային գործիքներում ընթացիկ ներդրումների արժեզրկում

2412 Կարճաժամկետ փոխառությունների անհավաքագրելիություն

2413 Երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մասի անհավաքագրելիություն

2414 Այլ պարտքային գործիքներում կարճաժամկետ ներդրումների անհավաքագրելիություն

2415 Այլ պարտքային գործիքներում երկարաժամկետ ներդրումների կարճաժամկետ մասի անհավաքագրելիություն

2416 Վարկ ստանալու ընթացիկ պարտավորվածությունների (զուտ հիմունքով չմարվող) արժեզրկում

2417 Ֆինանսական վարձակալության գծով համախառն մուտքերի կարճաժամկետ մասի անհավաքագրելիություն

25 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

251 Դրամարկղ

2511 Ազգային արժույթի դրամարկղ

2512 Արտարժույթի դրամարկղ

2513 Սառեցված գումարներ դրամարկղում

252 Հաշվարկային հաշիվ

2521 Հաշվարկային հաշիվ

2522 Սառեցված գումարներ հաշվարկային հաշվում

253 Արտարժութային հաշիվ

2531 Արտարժութային հաշիվ երկրի ներսում

2532 Արտարժութային հաշիվ արտերկրում

2533 Սառեցված գումարներ արտարժութային հաշվում

254 Այլ հաշիվներ բանկերում

2541 Ակրեդիտիվներ

2542 Չեկային գրքույկներ

2543 Այլ հաշիվներ բանկերում

255 Դրամական միջոցներ ճանապարհին

256 Դրամական փաստաթղթեր

26 ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ

261 Ընթացիկ ակտիվներ հաշվանցումը հետաձգված անուղղակի հարկերի գծով

262 Պատվիրատուներից ստացվելիք համախառն գումարներ կառուցման պայմանագրերի գծով

ԴԱՍ 3. ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

31 ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ԷՄԻՍԻՈՆ ԵԿԱՄՈՒՏ

311 Կանոնադրական կապիտալ

3111 Հասարակ բաժնետոմսեր

3112 Արտոնյալ բաժնետոմսեր

3113 Բաժնեմասեր

3114 Փայեր

312 Չվճարված կապիտալ

3121 Թողարկված և չտեղաբաշխված կապիտալ

3122 Տեղաբաշխված և չվճարված կապիտալ՝ մինչև անվանական արժեքի չափով

3123 Տեղաբաշխված և չվճարված կապիտալ՝ անվանական արժեքը գերազանցող չափով

313 Հետ գնված կապիտալ

3131 Հետ գնված հասարակ բաժնետոմսեր՝ անվանական արժեքով

3132 Հետ գնված հասարակ բաժնետոմսեր՝ անվանական արժեքի և հետգնման գնի տարբերության չափով

3133 Հետ գնված արտոնյալ բաժնետոմսեր՝ անվանական արժեքով

3134 Հետ գնված արտոնյալ բաժնետոմսեր՝ անվանական արժեքի և հետգնման գնի տարբերության չափով

3135 Հետ գնված բաժնեմասեր՝ անվանական արժեքով

3136 Հետ գնված բաժնեմասեր՝ անվանական արժեքի և հետգնման գնի տարբերության չափով

3137 Հետ գնված փայեր՝ անվանական արժեքով

3138 Հետ գնված փայեր՝ անվանական արժեքի և հետգնման գնի տարբերության չափով

314 Էմիսիոն եկամուտ

32 ՎԵՐԱՉԱՓՈՒՄԻՑ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

323 Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ

3231 Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ

3232 Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ

324 Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ

3241 Փոխարժեքային տարբերություններ՝ արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից

3243 Փոխարժեքային տարբերություններ՝ արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրման հեջերի գծով

326 Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի բաժնեմասը

33 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

331 Շահույթ կամ վնաս

3311 Շարունակվող գործունեությունից շահույթ կամ վնաս

3312 Ընդհատված գործունեությունից շահույթ կամ վնաս

34 ՉԲԱՇԽՎԱԾ ՇԱՀՈՒՅԹ (ՉԾԱԾԿՎԱԾ ՎՆԱՍ)

341 Նախորդ տարիների ֆինանսական արդյունքների ճշգրտում

3411 Նախորդ տարիների սխալների հետընթաց ուղղման արդյունքում առաջացած ճշգրտում

3412 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետընթաց կիրառման արդյունքում առաջացած ճշգրտում

342 Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)

343 Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)

344 Միջանկյալ շահաբաժիններ

35 ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՅԼ ՀՈԴՎԱԾՆԵՐ

351 Պահուստային կապիտալ

352 Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ

ԴԱՍ 4. ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

41 ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

411 Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ

412 Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ

4121 Տրված երկարաժամկետ մուրհակների գծով վճարվելիք համախառն գումարներ

4122 Երկարաժամկետ չփոխարկելի պարտատոմսերի գծով վճարվելիք համախառն գումարներ

4123 Երկարաժամկետ փոխարկելի պարտատոմսերի գծով վճարվելիք համախառն գումարներ

4124 Մարելի արտոնյալ բաժնետոմսերի գծով վճարվելիք համախառն գումարներ

4125 Այլ երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ

413 Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ

414 Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով

4141 Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ վարկերի գծով

4142 Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ փոխառությունների գծով

4143 Չկրած տոկոսային ծախսեր ֆինանսական վարձակալության գծով

415 Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ

42 ԱՅԼ ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

421 Ակտիվներին վերաբերող շնորհներ

422 Հետաձգված հարկային պարտավորություններ

425 Ոչ ընթացիկ պահուստներ

426 Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը

429 Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ

ԴԱՍ 5. ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

51 ՍՏԱՑՎԱԾ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԱՐԿԵՐ, ՀԵՋԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

511 Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ

512 Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս

513 Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ

514 Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս

5141 Տրված երկարաժամկետ մուրհակների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս

5142 Տեղաբաշխված երկարաժամկետ պարտատոմսերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս

5143 Այլ երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս

515 Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս

516 Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով

5161 Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ վարկերի գծով

5162 Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ վարկերի կարճաժամկետ մասի գծով

5163 Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ փոխառությունների գծով

5164 Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մասի գծով

5165 Չկրած տոկոսային ծախսեր ֆինանսական վարձակալության կարճաժամկետ մասի գծով

517 Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական պարտավորություններ

5171 Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորություններ

5172 Սկզբնապես որպես «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» դասակարգված ֆինանսական պարտավորություններ

518 Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ

52-53 ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

521 Կրեդիտորական պարտքեր գնումների գծով

5211 Կրեդիտորական պարտքեր ստացված հումքի, նյութերի գծով

5212 Կրեդիտորական պարտքեր ապրանքների գնումների գծով

5213 Կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների, ընդունված աշխատանքների գծով

5214 Կրեդիտորական պարտքեր ստացված ֆինանսական ակտիվների գծով

5215 Կրեդիտորական պարտքեր ստացված հիմնական միջոցների գծով

5216 Կրեդիտորական պարտքեր այլ գնումների գծով

523 Ստացված կանխավճարներ

5231 Ստացված կանխավճարներ վաճառվելիք արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գծով

5232 Ստացված կանխավճարներ վաճառվելիք ոչ ընթացիկ ակտիվների գծով

5233 Ստացված կանխավճարներ գործառնական վարձակալության գծով

5234 Այլ նպատակներով ստացված կանխավճարներ

524 Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով

5241 Պարտքեր շահութահարկի գծով

5242 Պարտքեր եկամտահարկի գծով

5243 Պարտքեր ավելացված արժեքի հարկի գծով

5244 Պարտքեր ակցիզային հարկի գծով

5245 Պարտքեր գույքահարկի գծով

5246 Պարտքեր հողի հարկի գծով

5247 Պարտքեր մաքսատուրքի գծով

5248 Պարտքեր հարկերի դիմաց հաշվարկված տույժերի, տուգանքների գծով

5249 Պարտքեր այլ պարտադիր վճարների գծով

525 Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով

5251 Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով՝ աշխատակիցների հաշվին

5252 Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով՝ գործատուների հաշվին

5253 Պարտավորություններ՝ փոխհատուցելի բացակայությունների գծով հաշվեգրվելիք պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով

527 Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով

5271 Պարտքեր աշխատավարձի վճարման գծով

5272 Պարտքեր փոխհատուցելի բացակայությունների գծով

5273 Պարտքեր պարգևավճարների գծով

5274 Պարտքեր ավանդագրված հատուցումների գծով

528 Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով

5281 Պարտքեր աշխատակիցներին առհաշիվ գումարների գծով

5282 Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով

529 Պարտքեր շահաբաժինների գծով

5291 Վճարվելիք շահաբաժիններ սովորական բաժնետոմսերի գծով

5292 Վճարվելիք շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով

531 Այլ ընթացիկ պարտավորություններ

5311 Պարտքեր գործառնական վարձակալության գծով

5312 Պարտքեր տույժերի, տուգանքների գծով

5313 Պարտքեր ապահովագրավճարների գծով

54 ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

541 Եկամուտներին վերաբերող շնորհներ

542 Վճարումը հետաձգված հարկային պարտավորություններ

543 Ընթացիկ պահուստներ

5431 Երաշխիքային վաճառքների գծով ընթացիկ պահուստներ

5432 Անբարենպաստ պայմանագրերի գծով ընթացիկ պահուստներ

5433 Տրամադրված երաշխավորությունների և երաշխիքների գծով ընթացիկ պահուստներ

5434 Ոչ ընթացիկ պահուստների ընթացիկ մաս

5435 Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ

544 Պատվիրատուներին հասանելիք համախառն գումարներ կառուցման պայմանագրերի գծով

ԴԱՍ 6. ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

61 ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

611 Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ

6111 Արտադրանքի վաճառքներից հասույթ

6112 Ապրանքների վաճառքներից հասույթ

6113 Աշխատանքների կատարումից հասույթ

6114 Ծառայությունների մատուցումից հասույթ

612 Իրացված արտադրանքի, ապրանքների հետ վերադարձումից հասույթի ճշգրտում

614 Գործառնական այլ եկամուտներ

6141 Այլ պաշարների օտարումից եկամուտներ

6142 Պաշարների արժեքի փոփոխությունից եկամուտներ, դեբիտորական պարտքերի կորուստների հակադարձումից եկամուտներ

6143 Գործառնական վարձակալությունից եկամուտներ

6144 Եկամուտներ տույժերից, տուգանքներից

6145 Նյութական վնասի փոխհատուցումից եկամուտներ

6146 Գործառնական այլ եկամուտներ

615 Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտ

6151 Բերքահավաքից (ներառյալ՝ ծնաճից) եկամուտ

6152 Կենսաբանական ակտիվները «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից օգուտ՝ պայմանավորված գնի փոփոխությամբ

6153 Կենսաբանական ակտիվները «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից օգուտ՝ պայմանավորված ֆիզիկական փոփոխությամբ

6154 Կենսաբանական ակտիվների օտարումից եկամուտ

62 ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

621 Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ

6211 Հիմնական միջոցների օտարումից եկամուտներ

6212 Ոչ նյութական ակտիվների օտարումից եկամուտներ

6213 Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ

6214 Այլ ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ

622 Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ

624 Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ

6243 Հիմնական միջոցների գծով արժեզրկման կորստի հակադարձումից օգուտներ

6244 Ոչ նյութական ակտիվների գծով արժեզրկման կորստի հակադարձումիցօգուտներ

6245 Ներդրումային գույքի վերաչափումից օգուտներ

625 Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ

626 Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ

6261 Իրական արժեքով չափվող ոչ գործառնական ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաչափումից օգուտներ

6262 Ինքնարժեքի հիմունքով չափվող ֆինանսական ակտիվների արժեզրկման հակադարձումից օգուտներ

6264 Ոչ գործառնական հեջավորման գործիքների վերաչափումից օգուտներ

6265 Ամորտիզացված արժեքով չափվող ոչ գործառնական ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ

627 Ֆինանսական ներդրումներից եկամուտներ

6271 Շահաբաժիններ

6272 Տոկոսային եկամուտներ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով

6273 Ֆինանսական վարձակալությունից եկամուտներ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով

628 Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտներ

629 Այլ եկամուտներ

6291 Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթի բաժնեմասը

6292 Այլ եկամուտներ

63 ԸՆԴՀԱՏՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

631 Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ՝ ընդհատված գործունեությունից

632 Ընդհատված գործունեությունը կազմող զուտ ակտիվների օտարումից և (կամ) վերաչափումից եկամուտներ

6321 Ընդհատված գործունեությանը կազմող զուտ ակտիվների օտարումից եկամուտներ

6322 Ընդհատված գործունեությունը կազմող զուտ ակտիվների «իրական արժեք հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից օգուտներ

64 ՎԵՐԱԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ. ՕԳՈՒՏՆԵՐ

643 Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ

644 Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված օգուտներ

6441 Վերադասակարգման ճշգրտումներ. փոխարժեքային իրացված օգուտներ՝ արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից

6443 Վերադասակարգման ճշգրտումներ. փոխարժեքային իրացված կորուստներ՝ արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրման հեջերի գծով

646 Վերադասակարգման ճշգրտումներ. բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի (օգուտի) բաժնեմասը

67 ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՃԱՆԱՉՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

673 Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ

674 Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտներ

6741 Փոխարժեքային օգուտներ՝ արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից

6743 Փոխարժեքային օգուտներ՝ արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրման հեջերի գծ

675 Ակտուարային օգուտներ

676 Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի (օգուտի) բաժնեմասը

ԴԱՍ 7. ԾԱԽՍԵՐ

71 ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐ

711 Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք

7111 Վաճառված արտադրանքի ինքնարժեք

7112 Վաճառված ապրանքների ինքնարժեք

7113 Կատարված աշխատանքների ինքնարժեք

7114 Մատուցված ծառայությունների ինքնարժեք

712 Իրացման ծախսեր

7121 Աշխատանքի վճարման ծախսեր, սոցիալական ապահովության վճարներ

7122 Հիմնական միջոցների մաշվածության, դրանց նորոգման և սպասարկման գծով ծախսեր

7123 Պահեստում գտնվող արտադրանքի, ապրանքների փաթեթավորման, տարայի, տեսակավորման, պահպանման ծախսեր

7124 Արտադրանքի, ապրանքների իրացման տրանսպորտային և ապահովության ծախսեր

7125 Կոմիսիոն և կոնսիգնացիոն վարձատրություն

7126 Մարկետինգի և գովազդի ծախսեր

7127 Իրացման այլ ծախսեր

713 Վարչական ծախսեր

7131 Աշխատանքի վճարման ծախսեր, սոցիալական ապահովության վճարներ

7132 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածության (ամորտիզացիայի), դրանց նորոգման և սպասարկման ծախսեր

7133 Գործուղման և ներկայացուցչական ծախսեր

7134 Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր

7135 Գրասենյակային և կոմունալ ծախսեր

7136 Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր

7137 Բանկային ծառայությունների ծախսեր, ապահովության ծախսեր

7138 Չփոխհատուցվող հարկերից ծախսեր

7139 Վարչական այլ ծախսեր

714 Գործառնական այլ ծախսեր

7141 Այլ պաշարների օտարումից ծախսեր

7142 Պաշարների արժեքի փոփոխությունից ծախսեր, վաճառքների գծով դեբիտորական պարտքերի կորուստների գծով ծախսեր, երաշխիքային սպասարկման և վերանորոգման գծով ծախսեր

7143 Գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցների մաշվածության ծախսեր

7144 Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր

7145 Արժեքների պակասորդներ և փչացումից կորուստներ, արտադրական ծախսումների սովորական (նորմալ) մակարդակը գերազանցող ծախսեր, խոտանված արտադրանքի հետ կապված ծախսեր

7146 Հետազոտության և մշակման ծախսեր

7147 Հիմնական միջոցների լուծարման ծախսեր

7148 Գործառնական այլ ծախսեր

715 Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր

7151 «Գյուղատնտեսական գործունեության ծախսումներ»

7152 Կենսաբանական ակտիվներն «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից կորուստ՝ պայմանավորված գնի փոփոխությամբ

7153 Կենսաբանական ակտիվներն «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից կորուստ՝ պայմանավորված ֆիզիկական փոփոխությամբ

7154 Կենսաբանական ակտիվների օտարումից ծախսեր

72 ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

721 Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր

7211 Հիմնական միջոցների օտարումից ծախսեր

7212 Ոչ նյութական ակտիվների օտարումից ծախսեր

7213 Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսեր

7214 Այլ ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր

722 Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսեր

724 Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ

7243 Հիմնական միջոցների գծով արժեզրկումից կորուստներ

7244 Ոչ նյութական ակտիվների գծով արժեզրկումից կորուստներ

7245 Ներդրումային գույքի վերաչափումից կորուստներ

725 Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ

726 Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ

7261 Իրական արժեքով չափվող ոչ գործառնական ֆինանսական ակտիվների վերաչափումից կորուստներ

7262 Ինքնարժեքի հիմունքով չափվող ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստներ

7264 Ոչ գործառնական հեջավորման գործիքների վերաչափումից կորուստներ

7265 Ամորտիզացված արժեքով չափվող ոչ գործառնական ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ

727 Ֆինանսական ծախսեր

7271 Վարկերի և փոխառությունների գծով տոկոսային ծախսեր՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով

7272 Ֆինանսական վարձակալության գծով տոկոսային ծախսեր՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով

7274 Պահուստների զեղչման ազդեցության ճշգրտման հետևանքով առաջացած տոկոսային ծախսեր

7275 Որպես պարտավորություն դասակարգված արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժիններ և տոկոսներ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով

728 Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր

729 Այլ ծախսեր

7291 Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով վնասի բաժնեմասը

7292 Այլ ծախսեր

73 ԸՆԴՀԱՏՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԾԱԽՍԵՐ

731 Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք՝ ընդհատված գործունեությունից

732 Ընդհատված գործունեությունը կազմող զուտ ակտիվների օտարումից և (կամ) վերաչափումից ծախսեր

7321 Ընդհատված գործունեությունը կազմող զուտ ակտիվների օտարումից ծախսեր

7322 Ընդհատված գործունեությունը կազմող զուտ ակտիվների ՝ «իրական արժեք հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից կորուստներ

733 Շահութահարկ ընդհատված գործունեության

7331 Ընդհատված գործունեության շահույթի կամ վնասի գծով շահութահարկ

7332 Ընդհատված գործունեությունը կազմող զուտ ակտիվների օտարումից կամ վերաչափումից օգուտի կամ կորստի գծով շահութահարկ

74 ՎԵՐԱԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ. ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

743 Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ

744 Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված կորուստներ

7441 Վերադասակարգման ճշգրտումներ. փոխարժեքային իրացված կորուստներ՝ արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից

7443 Վերադասակարգման ճշգրտումներ. փոխարժեքային իրացված կորուստներ՝ արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրման հեջերի գծով

746 Վերադասակարգման ճշգրտումներ. բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի (կորստի) բաժնեմասը

75 ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ (ԵԿԱՄՈՒՏ)

751 Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)

7511 Ընթացիկ հարկի գծով ծախս (եկամուտ)

7512 Հետաձգված հարկի գծով ծախս (եկամուտ)

77 ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՃԱՆԱՉՎՈՂ ԾԱԽՍԵՐ

773 Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ

774 Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից կորուստներ

7741 Փոխարժեքային կորուստներ՝ արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից

7743 Փոխարժեքային կորուստներ՝ արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրման հեջերի գծով

775 Ակտուարային վնասներ

776 Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի (կորստի) բաժնեմասը

ԴԱՍ 8. ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇԻՎՆԵՐ

81 ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԾԱԽՍՈՒՄՆԵՐ

811 Հիմնական արտադրություն

8111 Ուղղակի նյութական ծախսումներ
8112 Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով
8113 Ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով
8114 Ուղղակի արտադրական այլ ծախսումներ
8115 Օժանդակ արտադրության ծախսումներ
8116 Անուղղակի արտադրական ծախսումներ

812 Օժանդակ արտադրություն

8121 Ուղղակի նյութական ծախսումներ
8122 Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով
8123 Ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով
8124 Օժանդակ արտադրության այլ ուղղակի ծախսումներ
8125 Անուղղակի արտադրական ծախսումներ

813 Անուղղակի արտադրական ծախսումներ

8131 Արտադրական ստորաբաժանումների կառավարչական և սպասարկող անձնակազմի աշխատանքի վճարման ծախսումներ
8132 Արտադրական ստորաբաժանումների կառավարչական և սպասարկող անձնակազմի սոցիալական ապահովության վճարներ
8133 Արտադրական նշանակության հիմնական միջոցների մաշվածություն
8134 Արտադրական նշանակության հիմնական միջոցների նորոգման, սպասարկման ծախսումներ
8135 Արտադրական նշանակության ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա
8136 Աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության ծախսումներ
8137 Արտադրական անձնակազմի գործուղման ծախսումներ
8138 Անուղղակի արտադրական այլ ծախսումներ

814 Խոտան և դրա շտկման ծախսումներ

8141 Խոտան արտադրանք
8142 Խոտանի ուղղման նյութական ծախսումներ
8143 Խոտանի ուղղման աշխատանքային ծախսումներ
8144 Խոտանի ուղղման գծով սոցիալական ապահովության վճարներ
8145 Խոտանի ուղղման այլ ծախսումներ

82 ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ (ՍՏԵՂԾՄԱՆ) ԾԱԽՍՈՒՄՆԵՐ

821 Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ

8211 Ուղղակի նյութական ծախսումներ
8212 Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով
8213 Ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով
8214 Այլ ուղղակի ծախսումներ
8215 Անուղղակի ծախսումներ

822 Սարքավորումների տեղակայման ծախսումներ

8221 Ուղղակի նյութական ծախսումներ
8222 Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով
8223 Ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով
8224 Այլ ուղղակի ծախսումներ
8225 Անուղղակի ծախսումներ

823 Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ

8231 Ուղղակի նյութական ծախսումներ
8232 Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով
8233 Ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով
8234 Այլ ուղղակի ծախսումներ
8235 Անուղղակի ծախսումներ

826 Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ

8261 Ուղղակի նյութական ծախսումներ
8262 Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով
8263 Ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով
8264 Այլ ուղղակի ծախսումներ
8265 Անուղղակի ծախսումներ

ԴԱՍ 9. ԱՐՏԱՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

91 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՉՊԱՏԿԱՆՈՂ ԱԿՏԻՎՆԵՐ

911 Գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցներ

912 Պատասխանատու պահպանման ընդունված ապրանքանյութական արժեքներ

913 Վերամշակման ընդունված նյութեր

914 Տեղակայման ընդունված սարքավորումներ

915 Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերով ընդունված ապրանքնե

916 Որպես գրավ պահվող ակտիվներ

92 ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

921 Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ

9211 Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող դրամական միջոցներ
9212 Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող արժեթղթեր

922 Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ

9221 Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն արժեթղթերում ներդրումներ կատարելու համար դրամական միջոցներ

9222 Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված արժեթղթեր

9223 Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ձեռք բերված արժեթղթեր

9224 Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ընդունված (ձեռք բերված) արժեթղթերի իրացումից դրամական միջոցներ

923 Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ

9231 Դեբիտորական պարտքեր արժեթղթերի վաճառքների գծով

9232 Դեբիտորական պարտքեր հաշվեգրված տոկոսների գծով

9233 Դեբիտորական պարտքեր հայտարարված շահաբաժինների գծով

9234 Տրամադրված փոխառություններ

924 Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ

9241 Պարտավորություններ հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն ստացված միջոցների գծով

9242 Պարտավորություններ կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով

925 Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք

926 Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ

9261 Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր

9262 Ստացված փոխառություններ

93 ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐ

931 Պայմանական պարտավորություններ

932 Պայմանական ակտիվներ

94 ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

941 Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված դեբիտորական պարտքեր

942 Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված կրեդիտորական պարտքեր

943 Չհատուցված հարկային վնաս

944 Գրավադրված ակտիվներ

945 Խիստ հաշվառման բլանկներ

946 Պարբերական և մասնագիտական գրականություն

947 Շահագործման մեջ գտնվող փոքրարժեք հիմնական միջոցներ և արագամաշ առարկաներ